600.0088.25.03.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

25 մարտի 2020 թվականի №88Ա

ք.Երևան

«ՋԻՆՋ-ԱՐՓԱ ՀԻԴՐՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՋԻՆՋ-ԱՐՓԱ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի մայիսի 23-ի №169Ա որոշմամբ իրեն տրամադրված «Ջերմուկհիդրո» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0621 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված ժամկետում՝ մինչև 2019 թվականի մարտի 23-ը, Հանձնաժողով չի ներկայացրել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, և նշված ժամկետը Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն համարվել է երկարաձգված մինչև 2020 թվականի հունվարի 19–ը,

բ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2020 թվականի հունվարի 24-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցի ուսումնասիրության նպատակով,

գ) Ընկերությունը 2019 թվականի նոյեմբերի 4-ի, 2020 թվականի հունվարի 13-ի, 20-ի և 30-ի, փետրվարի 11-ի, մարտի 4-ի գրություններով ըստ էության հայտնել է, որ պետական մարմնի գործողությամբ պայմանավորված՝ առաջացել է ԼԷ №0621 լիցենզիայի պայմանների կատարման անհնարինության իրավիճակ, որը կապ չունի Ընկերության գործողությունների ու անգործության հետ և խնդրել նշվածը դիտարկել որպես ֆորսմաժորային իրավիճակ, ինչպես նաև Ընկերության նկատմամբ չկիրառել բացասական հետևանքների հանգեցնող միջոցներ,

դ) հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և 2-րդ մասը՝ վարչական վարույթը երկու անգամ 10-ական օրով երկարաձգվել է,

ե) Հանձնաժողովը վարչական վարույթի շրջանակում առկա փաստական հանգամանքների բազմակողմանի և օբյեկտիվ ուսումնասիրության համար փոխօգնության կարգով դիմել է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն՝ Ընկերության բարձրացրած հարցերի վերաբերյալ վերջինիս դիրքորոշումը ստանալու նպատակով և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը և 2-րդ մասը՝ 30 օրով երկարաձգել է վերոնշյալ վարչական վարույթի ժամկետը,

զ) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2020 թվականի մարտի 16-ին Հանձնաժողով է ներկայացրել միջնորդություն՝ սույն թվականի հունվարի 24-ին վերջինիս նկատմամբ հարուցված վարչական վարույթը մինչև Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում քննվող №ՎԴ/1083/05/20 վարչական գործով դատական ակտ կայացնելը կասեցնելու վերաբերյալ: Միջնորդությանը կից ներկայացվել է №ՎԴ/1083/05/20 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2020 թվականի մարտի 9-ի որոշումը, որով վարույթ է ընդունվել Ընկերության հայցադիմումն ընդդեմ Հանձնաժողովի՝ էլեկտրական էներգիայի արտադրության ԼԷ №0621 լիցենզիայի շրջանակներում ներկայացված 6775000 (վեց միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ երաշխիքային գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելուն ուղղված գործողություն կատարելուց ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու պահանջի մասին,

է) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը,

ը) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ անհնարին է դրա արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի վարույթում քննվող №ՎԴ/1083/05/20 վարչական գործի ավարտը: Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի հիմքով վարչական վարույթի կասեցման պատճառ կարող է լինել այն դատական գործի առկայությունը, որի արդյունքում ընդունվող դատական ակտով հաստատվող հանգամանքներն ունեն այնպիսի առանցքային նշանակություն տվյալ վարչական վարույթի համար, որ առանց այդ հանգամանքների անվիճելիության անհնարին է ընդունել վարչական ակտ: Տվյալ դեպքում №ՎԴ/1083/05/20 վարչական գործի շրջանակում քննության առարկան, ըստ էության, Ընկերության կողմից իր պարտավորությունների կատարման անհնարինության հանգեցնող ֆորսմաժորային հանգամանքների առկայության գնահատումն է և դրա հիման վրա Հանձնաժողովին՝ Կարգին համապատասխան երաշխիքի գումարի կեսի փոխանցումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե արգելումը, ուստի այդ դատական գործով հայցի բավարարումն անխուսափելիորեն կազդի սույն վարչական վարույթի ընթացքի և դրա արդյունքում ընդունվելիք վարչական ակտի վրա, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետը և 60-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կասեցնել Ընկերության նկատմամբ 2020 թվականի հունվարի 24-ից հարուցված վարչական վարույթը՝ մինչև վարչական դատավարության կարգով քննվող №ՎԴ/1083/05/20 գործով վերջնական դատական ակտի կայացումը:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մարտի 26-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
25 մարտի 2020թ.